ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ը

«09» մայիսի 2019 թվականի N 75-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի №34-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի №699-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 21-րդ ենթակետը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի 08.04.2019թ. №01/06/1308-19 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2019 թվականի փետրվարի 19-ի N 34-Ա հրամանում փոփոխություն կատարելու անհրաժեշտության վերաբերյալ.

ՀՐԱՄԱՅՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2019 թվականի փետրվարի 19-ի «Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին 2019 թվականի ֆինանսական աջակցության տրամադրման չափաքանակները՝ ըստ առանձին ջրօգտագործողների ընկերությունների հաստատելու մասին» №34-Ա հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

4/9/2019

X

VERIFIED OCSP 09-Apr-19 09:32:48 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118

Հավելված
Հայաստանի Հանրապետության էներգետիկ
ենթակառուցվածքների և բնական պաշարների
նախարարի 2019 թվականի
մարտի 09-ի N 75-Ա հրամանի

Հավելված
Հայաստանի Հանրապետության էներգետիկ
ենթակառուցվածքների և բնական պաշարների
նախարարի 2019 թվականի
փետրվարի 19-ի N34-Ա հրամանի

ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐ

ՈՌՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ՝ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ/Հ	Անվանումը	Գումարը (հազ. դրամ)
1	«Երևան» ՋՕԸ	92,364.3
2	«Արտաշատ» ՋՕԸ	523,069.0
3	«Արարատ» ՋՕԸ	344,708.0
4	«Արմավիր» ՋՕԸ	737,005.2
5	«Էջմիածին» ՋՕԸ	516,343.4
6	«Շենիկ» ՋՕԸ	169,708.4
7	«Արագածոտն» ՋՕԸ	172,810.9
8	«Թալին» ՋՕԸ	247,074.2
9	«Կոտայք» ՋՕԸ	263,657.5
10	«Գեղարքունիք» ՋՕԸ	193,051.9
11	«Շիրակ» ՋՕԸ	81,996.5
12	«Տավուշ» ՋՕԸ	90,521.4
13	«Լոռի» ՋՕԸ	29,980.5
14	«Եղեգնաձոր» ՋՕԸ	58,641.3
15	«Սյունիք» ՋՕԸ	115,831.5
Ընդամենը		**3,636,764.0**